# ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվական համակարգ. 21 փետրվարի 2002 թ.:*

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնությամբ նոր նշանակումներ են կատարվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում և թեմերում:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը նշանակվել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի (ՔԴԿ) խորհրդի նախագահ՝ շարունակելով կատարել թեմակալ առաջնորդի իր պարտականությունները:

Հայրապետական հաջորդ օրհնությամբ Սևանի Վազգենյան դպրանոցի տեսուչ Տ. Բագրատ արք. Գալստանյանը նշանակվել է Տեղեկատվական Համակարգի խորհրդի նախագահ:

Տ. Սարգիս քհն. Չոփուրյանը, Տ. Մաղաքիա քհն. Օհանյանը և Տ. Վաչե քհն. Հայրապետյանը ծառայության են կոչվել Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում: Թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի օրհնությամբ քահանաները իբրև հոգևոր հովիվներ իրենց ծառայությունն են բերելու Ս. Պետերբուրգում, Վոլգոգրադում և Աստրախանում: